

տէրունական պատկերներուն զեղեցիկութեամբ: Տրապիզոնէն Վենետիկ բերուած ըլլալուն համար՝ այս ձեռագիրը ընդհանրապէս իբր Տրապիզոնի Աւետարան ճանչցուած է, բայց չենք գիտեր ո՛չ ծագման տեղը, ո՛չ թուականը, ոչ ալ ծագողին կամ ստացողին անունը: Սակայն այսպիսի խոշոր եւ չքեղ մատեան մը կրնար պատկանիլ միայն արքայական տան մը, եւ ընդօրինակուած է անշուշտ Հայաստանի վերջին թագաւորներէն մէկուն համար: Մանրանկարներէն ոմանց յունարէն վերատառութիւններէն կարելի է հետեւցնել որ նկարիչներէն մին Յոյն մը եղած է, կամ Բիւզանդիոն դարձեալ Հայ մը. ուրիշ նկարներ եւ խորաններ հայկական դրոշմ կը կրեն, եւ այս ձեռագիրը բիւզանդական ու հայկական ոճերու խառնուրդին յատկանշական օրինակներէն մէկն է:

Բիւզանդական տիրապետութենէն եւ Սելճուքեան արշաւանքէն վերջը, երբ թագաւորները եւ շատ մը նախարարներ բիւզանդական կայսրութեան մօտ ապաստանեցան, Հայաստան ամայի մնաց, եւ մշակութային շարժումը ատեն մը կանգ առաւ: ԺԱ. դարուն երկրորդ կէսէն սկսեալ՝ մօտաւորապէս հարիւր տարուան ընթացքին, գեղարուեստական գործունէութիւնը բոլորովին դադրած էր եւ հազիւ ԺԲ. դարուն վերջին տասնեակ տարիներուն է որ վերածնունդի նշաններ կը սկսին երեւնալ: Ս. Ղազարու հաւաքածոյին մէջ կան երկու Աւետարաններ, մէկը (թիւ 961) որոշապէս, միւսը (թիւ 196) հաւանաբար Անիի մօտ, Հոռոմոսի վանքը գրուած, որոնք թէպէտ բարձր գեղարուեստական արժէքէ զուրկ՝ սակայն հնագիտական տեսակէտով շատ թանկագին են, իբր առաջին օրինակները այն նոր շարժումին որ շատ շուտով կը զարգանայ եւ ԺԳ. դարու սկիզբը արդէն իսկ գեղարուեստական ամէն ճիւղերու մէջ չքեղ գործեր կ'արտադրէ: Նկարչութեան համար այս շրջանի աչքառու դէմքն է

Իդնատիոս նկարիչը, որ աշխատած է Հոռոմոսի եւ Հաւութաոսի նշանաւոր վանքերուն մէջ: Գարեգին կաթողիկոս ուսումնասիրած է այս նկարչի գործունէութիւնը, եւ այս գործունէութեան նմոշներէն մէկն է Ս. Ղազարու թիւ 151 Աւետարանը «ոսկւով եւ երանդ երանդ խառնուածով զարդարեալ»: Բիւզանդական տիրապետութեան հետ գրեթէ անհետացած է բիւզանդական աղբեցութիւնը եւ Իդնատիոսի ոճը աւելի դուռ հայկական եւ արեւելեան է:

ԺԳ. դարուն երկրորդ կէսէն վերջը Հայաստանի մօտաւորական կեդրոններէն առաջնադոյնն էր Գլաձորը, Սիւնիքի գաւառին մէջ, շնորհիւ Պոռֆիրոս իշխանական ընտանիքին հոգածութեան եւ Ներսէս Մըշեցի եւ Եսայի Նչեցի վարդապետներու լուսամբիտ առաջնորդութեան: Այս վանքին մէջ՝ դրոմանք «Երկրորդ Աթէնք» կ'անուանեն, կ'աշխատէր Թորոս Տարօնեցին, ԺԴ. դարուն ամենամեծ նկարիչը: Իր գործունէութեան առաջին օրինակներէն մէկն է Ս. Ղազարու թիւ 1907 Աւետարանը, գրուած ինքն իսկ «տիեզերալոյս բարունապետ Եսայի»ին համար: Այս փոքր ձեռագիրը, իր ճոխ զարդերով եւ մեծաքանակ մանրանկարներով, կը ցուցնէ Թորոսի արուեստին ունեցած աղբիւր Մեծ Հայքի աւանդութեան հետ, նա մանաւանդ նախորդ դարուն Իդնատիոս նկարչի գործերուն հետ: Բայց Թորոս ծանօթ էր նաեւ Կիլիկեան արուեստին եւ որոշ չափով աղբուած անկէ:

Կիլիկեան այս արուեստը կը սկսի հայ իշխաններուն հաստատուելուն հետ: Գլըրիչներ եւ ծագողներ, ոմանք եկած Մեծ Հայքի գաւառներէն, ուրիշներ Փոքր Հայքի այն քաղաքներէն՝ ուր Բագրատունի եւ Արծրունի թագաւորները ապաստանած էին, կ'աշխատին նոր հիմնուած վանքերուն մէջ, ինչպէս Դրաղարկ, Սկեւոս, Մլինձ եւն.: Մանրանկարչական արուեստը մեծ փայլ մը կը ստանայ ԺԶ. դարու վեր-

ջին տասնեակներէն սկսեալ. թագաւորներ, իշխաններ, կաթողիկոսներ իրարու հետ կարծես կը մրցին ա'լ աւելի զեղեցիկ ձեռագիրներ պատրաստել տալով: Առաջին շրջանին գլուխ գործողներէն մէկն է Սկեւոսայի Աւետարանը (թիւ 1635), գրուած 1193 թուին Կոստանդին գրչի կողմէ, Լամբրոնի տէրերու «գերագոյն իշխանաց իշխանի Հեթոյ սեւաստոսի» եւ իր եղբոր՝ «տեառն Ներսիսի գերահռչակ վարդապետի» համար: Գոյներու նուրբ բաղադրութիւնը, մաքիփներու ճոխութիւնը ու զանազանութիւնը, մասնաւոր հմայք մը կու տան խորաններուն, կիսախորաններուն ու հարիւրաւոր լուսանցազարդերուն. իսկ մըկրտութեան ու խաչելութեան նկարները կը ցուցնեն որ ծագողը նոյնքան ճարտար էր մարդկային պատկերացումներու մէջ:

ԺԳ. դարու մեծ վարպետին՝ Թորոս Ռոսլինի ձեռքէն գործեր չկան դժբախտաբար Վենետիկ, ոչ ալ Կեռան թագուհիի կամ Լեւոն արքայի Աւետարաններուն նման բաղմամբիւ տէրունական պատկերներով զարդարուած ձեռագիրներ: Սակայն եւ այնպէս կան քանի մը մատեաններ, որոնք լաւ գաղափար մը կու տան այս դարու արուեստի մասին, ինչպէս թիւ 69 Աւետարանը, գրուած ի Հոռոմիայ 1244-ին գեղարուեստաէր Կոստանդին կաթողիկոսին համար: Հակառակ անոր որ ձեռագիրը խոնավութենէն վնասուած է, կարելի է ուսումնասիրել խորաններու զարդերը, որոնք շատ կը նմանին Սկեւոսայի Աւետարանին եւ միեւնոյն գեղարուեստական աւանդութեան վկաններն են: Ուրիշ ձեռագիր մը, որ կը պարունակէ Սողոմոնի եւ Յորայ գիրքերը (թիւ 376), կրկնակի կերպով արքայական օրինակ մըն է, որովհետեւ գրուած է Յովհաննէս եպիսկոպոս Արքայեղբոր կողմէ, Հեթում Ա.ի դուստր Յիմիի համար: Երկու նկարները, — Սողոմոն եւ Նաթան մարդարէն, ու Երգ երգոցի հարսը

եւ փեսայն, — ընտիր նմոշներ են ԺԳ. դարու նուրբ արուեստին ու ճաշակին:

Կ'արժէ մէջըներել այս ձեռագիրներու յիշատակարաններէն քանի մը տողեր, մատնանշելու համար թէ քաղաքական կամ անձնական դժուարին պահերուն՝ ստացողները ի՞նչ մեծ սփոփանք կը գտնէին այս թանկագին մատեանները ունենալով: Կոստանդին Կաթողիկոսի Աւետարանին գրիչը կը պատմէ թէ ձեռագիրը «գրեալ եղեւ ի դառն եւ խուճապուտ եւ ի կականման ժամանակի, յորժամ ել աղզն խուժադուժ որ կոչի Տաթար, եւ սպառեաց զամենայն հասակ յերկրէ, եւ մնացեալքս՝ ի յերես եմք ի յահէ նոցա: Իսկ աստուածամեծար սուրբ տէրս իմ որ թէպէտեւ ողբայ անմխիթար զբեկումն ժողովրդեան իւրոյ, սակայն ոչ կասի ի յուսոյ ակնկալութենէ Տեառն, մեծահաւատ լեալ իբրեւ զԱբրահամ, յայտմ խոովայեղ ժամանակի ետ գրել զսա յուրախութիւն սրտի իւրոյ»:

Իսկ Յովհաննէս Արքայեղբայր, ակնարկելով 1263ի դիպումներուն, երբ Ֆիմին կորսնցուց իր ամուսինը եւ Սալիտայի թագաւորութիւնը, կը գրէ. «Ընկալ, ո՛վ Աստուածասէր եւ զթաւէր հոգի, մեծը ըստ մարմնոյ եւ բարգաւաճը ըստ ոգւոյ ծիրանածինդ Ֆիմի, զբաղձալին քոյ՝ երկամբք ձեռն մեղապարտի Յովհաննիսի եպիսկոպոսի, կրտսեր եղբար հաւր քո, որով յԱստուած եւ յաստուածայնսն խոկացիս միշտ, եւ տրամեալ սրտի քո սփոփանք սովաւ ստացես, դիտելով զի սեպհական է մարդկան նժդեհութիւն եւ պանդխտութիւն եւ փորձանք, որոց անդորր տացէ քեզ որ ամենահնարն է»:

ԺԴ. դարուն՝ ինչ որ Թորոս Տարօնեցին էր Սիւնիքի մէջ, նոյնն էր Սարգիս Պիծակ Կիլիկիոյ համար, իր շրջանին առաջնապարզ նկարիչը: Իր ձեռագիրներէն երեքը կը գտնուին Ս. Ղազարու հաւաքածոյին մէջ — Աստուածաշունչ մը, գրուած 1319-ին, (թիւ 1508), Աւետարան մը գրուած

1332ին ի Դրաղարկ, (թիւ 16) եւ Անսիղք Անտիոքայ, ընդօրինակուած 1331ին Լեւոն Դ-ի համար (թիւ 107): Սարգիս Պիծակի ինքնուրոյն ոճը չունի նախորդ դարուն գործերու նրբութիւնը կամ վայելչութիւնը, բայց շատ մը տեսակէտներով աւելի հաւատարիմ կը մնայ հին հայկական աւանդութեան: Մասնաւորապէս հետաքրքրական են Աւետարանին լուսանցքներու մէջ նկարուած փոքր պատկերները, ուր այրերը եւ կիները շատ անգամ կը կրեն ժամանակի հայ տարազը: «Անսիղք Անտիոքայ»ի սկիզբը նկարուած պատկերը կը ներկայացնէ դատաստան մը, որուն կը նախագահէ Լեւոն Դ. ինքը, նստած ծալապատիկ ցած դահի մը վրայ:

Վերեւ յիշուած ձեռագիրները կը բաւեն ցուցնելու համար որ Ս. Ղազարու հաւաքածոյին մէջ կան առաջնակարգ ներկայացուցիչներ հայ մանրանկարչութեան ամէն մէկ շրջանէն: Ընդհանուր գաղափարը լրացնելու համար պէտք պիտի ըլլար նաեւ քննել այն ձեռագիրները, որոնք ընդօրինակուած են հայրենիքի սահմաններէն դուրս, ինչպէս Ձեռնադրութեան գիրքը որ 1248ին գրուած է հիւսիսային Սուրիոյ մէջ «ի հռչակաւոր ուխտիս որ կոչի Ձառնակ» (թիւ 1657), կամ Աւետարան մը գրուած ի Տփլիս 1304ին (թիւ 546), կամ եւս ուրիշ Աւետարան մը որ հաւանաբար Եդեսիա ընդօրինակուած է (թիւ 888): Օտար երկրի մէջ գրուած այս ձեռագիրներէն միայն երկուքին մասին պիտի խօսիմ շատ համառօտ կերպով: Առաջինն է խոշոր եւ չքեղ Աւետարանը, գրուած 1007ին «ի դաւառին Մակեդոնոյ, ի քաղաքն որ կոչի Անդոնապոլիս» (թիւ 887): Ստացողն է «Յովհաննէս Պոտոսպաթար թագաւորի եւ Պոռքսիմոս Դուկիս Թոթորակին ձորտս», որուն պատկերը նկարուած է Աւետարանին սկիզբը: Ան իր մատենան կը նուիրէ Աստուածածնին որ, Յիսուս մանուկը գրկին,

բազմած է դահին վրայ: Թէ՛ այս նկարը եւ թէ՛ չորս Աւետարանիչներու պատկերները բիւզանդական ոճէն ազդուած են, ինչ որ շատ բնական է նկատի առնելով որ ձեռագիրը գրուած է բիւզանդական քաղաքի մը մէջ, բայց խոշոր խաչերը՝ որոնք նկարուած են Աւետարաններուն վերջը՝ զուտ հայկական են: Այս ձեռագիրը ուրիշ տեսակէտով ալ արժէքաւոր է մեղի համար, ան կ'ապացուցանէ որ Բիւզանդական կայսրութեան մէջ բարձր պաշտօնի հասած հայերը միշտ չէին այլասերած եւ հաւատարիմ կը մնային իրենց մայրենի լեզուին: Երկրորդ օրինակը նոյնպէս Աւետարան մըն է, գրուած 1254ին «ի մեծ եւ ի յաննուանի եւ յակնադիտակ եւ ի հռչակաւոր քաղաքիս Հոռմ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի եւ Պաւղոսի, ի խորանիս սուրբ Պետրոսի» (թիւ 1347): Մասնաւոր ուսումնասիրութեան արժանի է այս ձեռագիրը անոր համար որ բոլորովին կը տարբերի ուրիշ հայ օրինակներէ իր խորաններուն ձեւերովը: Կամարներու տեղ նկարուած ճարտարապետական ձեւերը — սրահներ, ապարանքներ եւն. կարիադետի նման սիւները կը յիշեցնեն լատին ձեռագիրներ, իսկ թագապարզ թռչուններ եւ ուրիշ մոթիֆներ արեւելեան հանգամանք ունին: Հոս կը տեսնենք արեւելեան եւ արեւմտեան ձեւերու հետաքրքրական խառնուրդ մը, գրիչը անտարակոյս իր աչքին առջեւ ունեցած է Լատին ձեռագիր մը, բայց զայն կուրօրէն չէ ընդօրինակած:

Միւթարեան միաբանները, որոնք Հայաստանի եւ ընդհանրապէս Փոքր Ասիոյ զանազան քաղաքներէն եւ զիւղերէն բերած են շատ մը ձեռագիրներ եւ կազմած ընտիր հաւաքածոյ մը, մեծ ծառայութիւն մատուցած են եւ շահած երախտագիտութիւնը ամէն անոնց, որոնք կը պարապին միջնադարեան արուեստի ուսումնասիրութեամբ:

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Ի ՄՏԱՆԵՆ ԱՐԵՎԱԿԱՆ

Կ'իջնէ մեղսօրէն քաւիշ իրիկունն հաղաղ եմ հիմա երկինք եւ երկիր. Կը մարի վերջին տխրակի գանգիւնն Դաշտերը կը գգան երջանիկ քըմբիք:

Կ'իջնէ իրիկուն աչքերուս վըրան Առանց ծանրութեան, առանց տխրանքի. Իմ եւ երկնի մէջ վարագոյր մը կայ Հիւսուած քելերով արծաթ եւ ոսկի:

Այլ չունիմ կեանքի հեւոտ արշաւանք Սըրտեր բաժանող մանապարհներ փակ. Երանի՛ ըլլար միշտ այս երազանքն Յաւիտեական քունն ուր աստղի տակ:

Ծառերն անշուք են, փերիներն անլաց Ազատ կը շըբի հալածուած ըստուերն. Եղեմը կ'իջնէ վարդերուն մէջ քաց Որ մեզի համար պատրաստեն մեր սէր:

Կը լըսէ՞մ մեղմիկ տերեւներու երգն, Կը լըսէ՞մ համբոյրն հովի շըբքներուն. Կը նընջէ շուշանն առուակի եզերքն Իր վըրան շըղարշ Ամօթածութիւնն:

Ո՛րքան հարուստ է հիմա բնութիւնն Աշխարհն ոսկեղէն, երկինք ծիրանի. Վերջին շողերուն լոյսն է գըւարքուն, Ըլլան մարդիկ չար, ըլլան եւ բարի:

Քէնիա, 9-Ա-1945

ՈՋ, ՄԻ ՎԱՐՈՒՌԻՔ

Ձեր սիրտն եթէ արշալոյսով չի յուզուիր Յոյց տըւէ՛ դուք անոր վարդերը շաղուտ. Եւ, ըսէ՛ք թէ, վըշտերու մայրն է երկիրն Ու ոչ ոքի կը խընայէ իրեն գուրն:

Ձեր սիրտն եթէ արեւմուտով չի յուզուիր Յոյց տըւէ՛ դուք անոր երկինքն աստղազարդ. Ըսէ՛ք, գիշերն է մեզի հետ սըգակիր, Եւ մութին մէջ իր յոյսն ունի ամէն մարդ:

Ձեր սիրտն եթէ երազներով չի յուզուիր, Յոյց տըւէ՛ դուք անոր խաչի մանապարհն. Շատ կան սրտեր որ այս աշխարհս չեն ապրիր Այլ վանքերու, աղօթքի եւ սիրահար:

Ո՛հ, մի՛ վարուիք տենչի նըման սրտին հետ, Որ ունայն տեղ միշտ կը յարդէ ալիքներ. Թող ամէն մարդ գայն օրօրէ երգաւետ, Խոհեմութեամբ ջամբելով միշտ քիչ մը սէր:

Քէնիա, 10-Բ-1946

ՀՈԳԵՒՈՐԵՐԳԵՐ

Դուն լոկ կըմաս ըլլալ սրտիդ պարտիգպան Վարդերու տեղ հոն սուրբ տենչեր ցանելու. Հող է մարմինդ ինչպէս դաշտերը գարնան Ուր որ կու գայ արփին ախոս բանալու:

Դուն ես այնտեղ լոկ սերմանող եւ հընձող ինչպէս հողին շարքով փարած մըշակներ. Մի՛ քողներ որ մամբան իյնայ մակտիդ ցողն, Օրհնեալ տենչերդ հոն յարութիւն չեն առներ:

Չունի երբեք երջանկութիւնը գաղտնիք Թէ սրտիդ մէջ ունիս գարուն յաւիտեան. Այնտեղ կ'իջնեն արշալոյսներ գեղեցիկ Ըզգաստութիւնն իրենց վըրայ պատմուման:

Երբ կը փըխի սիրտդ աչքերուդ անձրեւով Յետոյ է որ կը համբուրէ գայն արփին. Տենչերդ սուրբ կը բողբոջին յորդումով, Եւ դուն կ'ըլլաս սիրած պարտեզն Յիսուսին:

Ամէն անգամ որ արշալոյսը կու գայ Ծով չի փընտեր եւ ոչ դաշտեր ծաղկայորդ. Հանգչի կ'ուզէ քու աչքերուդ մէջ տըղայ, Ուր միշտ ծաւի երկինք մը կայ եօթներորդ:

Թերեւս քեզ ունայն տեսիլ մը քըւի, Ինչպէս փայլակն արեւելէն արեւմուտ. — Ո՛չ, Աստուածդ է շողերուն մէջ արեւի, Որ միշտ կու գայ դեղ գընելու աչքերուդ:

Բաց այդ երկու պատուհանները փոքրիկ Տաճարներու դըռներուն պէս աղօթկիր. Որ հոն մըտնեն վեց քեւերով գեղեցիկ Հաւատք եւ Յոյս եւ օրերուդ մանուկ Սէրն:

Դու պէտք ունիս յաւիտեական լոյսերու, Որ աչքերդ մինչ հոգիդ խորն իջնեն. Այս է մամբան երկրէ երկին հասնելու, Թէպէտ քայլերդ հողն ու փայտն արգիլեն:

Քէնիա, 4-Է-1946

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ